

չուքովը, ու ասոնք երգելու յիմարութեան, զանոնք վայելելու թանձր իրապաշտութիւնը ձգելով ուրիշներուն) վերապահուած սա դժբախտութիւնը աղէտ է, երբ կը տարածուի գործօնութեան ալ մարդոց, որոնք անկարող կ'ըլլան կրելու զոյգ պատրանքները,- կեանքը կրելու եւ զայն հերքելու:

Մաթիկ Մելիքխանեան կեանքէն այնքան բան կը հասկնար, որքան... Պետրոս Դուրեանը հարստութենէն: Առատ էին իր բերնին մէջ լաւը, պատուականը, վատը, կեղտոտը, անճնագոհը, շահամոլը, ազգասէրը, դաւաճանը: Բնական համոզումով: Խօսեցուցէք մարդերը, փոյթ ունենալով երկնումները - բառերէ- նութերու: Մօտիկն էր այդ ցանկին վրայէն զանոնք ճանչնալու: Վերի բառերը միայն բառարաններու բնակիչներն էին, այլ՝ բոլոր Մաթիկներու ու հանգունօրէն բոլոր երիտասարդներու համար՝ ֆարմանդներ, որոնք պատրաստ պիտակի մը դերը կը խաղան, ասոր ու անոր ճակտին կամ կռնակին փակցուելիք:

Այդ օրերուն, այսինքն՝ «սքանչելի ճեմարանը» դեռ չձգած, պատանի Մաթիկը յեղափոխակա՞ն, ինչպէս տեսանք աւելի ետքը, մեր երկրորդական վարժարաններուն մէկ քանիին վրայ: Կեդրոնականը (Պոլիս) յեղափոխութեան վառարան յայտարարող կարծիքը աւելի էր, քան կարծիքը: Օտեանի տիպարը (Մապլվար) չեմ կրցած նախզգալ Մաթիկին մէջ, որ աւելի պարկեշտ էր, քան յետսածին միւս դժբախտը, համալսարանէն ինկած, մէկերկու տարի անոր սեղանները, սրահները ձանձրացնելէ ետք ու ինկած նոյն ատեն տրորումին, որ մեծ գաղափարներուն գուհին էր, այս դարուն սկիզբը, մեր ուսանողներուն: Մեր գրականութիւնը (Առանձար, Օտեան, Պարթեւեան, Բաշալեան, Արփիարեան) ըրած են սեւեռումներ տիպարէն, որ այդ ցեխէն պիտի մղուի իր յետին փրկութեան սրբազան մրցանքին, մա՛նաւանդ Կովկաս,